

Գործք Առաքելոց 1:9-11 (Acts 1:9-11)

«Ան Նորէն Պիտի Գայ»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 12.24.95

**Ձեր Սր. Գրքերը բացէ՛ք Գործք. Առաքելոց առաջին գլուխը և հետեւեցէ՛ք ինձի - պիտի կարդամ Զրդ համարէն սկսեալ:**

Երեւակայեցէ՛ք հետեւեալը՝ Յիսուս Իր յարութենէն ետք՝ քալեց, խօսեցաւ և վերջապէս՝ ապրեցաւ Իր աշակերտներուն հետ: Այս ընթացքին Յիսուս Իր աշակերտներուն սորվեցուց հետեւեալը՝ Աստուծոյ թագաւորութիւնը, և իրենց ապագայի ծառայութիւնը: Օր մը Ջիթենեաց լեռը բարձրացան միասին, և երբ կը խօսակցէին, Յիսուս ամպերուն մէջ համբարձաւ:

Աշակերտները զարմացած վեր երկինք կը նայէին. եթէ մենք իրենց տեղը ըլլայինք, նոյնը պիտի ընէինք. իսկապէս զարմանալի, տարօրինակ և անհասկնալի երեսոյթ մըն էր:

Աշակերտները սթափեցան երբ երկու հրեշտակներ երեւցան և ըսին, *«ինչո՞ւ կայներ դէպի երկինք կը նայիք, Յիսուս այսպէս կրկին պիտի գայ, ինչպէս տեսաք անոր երկինք երթալը:»*

Այսօր մենք ալ Յիսուսի երկրորդ գալուստը կը սպասենք աշակերտներուն նման: Ձեզ գիտեր նիշտ եր՞բ պիտի գայ: Աստուծոյ խօսքը կ'ըսէ թէ շուտով ետ պիտի գայ: Որպէս Քրիստոնեաներ, Յիսուսի երկրորդ գալուստը մեր մեծափոյն յոյսն ու ուրախութիւնն է:

Դիւրին է խորհիլ Յիսուսի ծնունդին և գործերուն մասին, և տեսնել եղածները իբրեւ պատմութիւն: Այս պատահարները օգնած են մեզի հաստատելու մեր հաւատքը: Արդիօք այսօր, այս անցեալի պատահածները կարեւո՞ր են մեզի:

Երեւակայեմն որ մեր եկեղեցին թանգարան մըն է, և մենք հսկիչներ և պատասխանատու անձեր ենք: Այս պատերէն ներս Յիսուսի անցեալի պատմութիւնը ապահովուած է: Ամէն Կիրակի կը հաւաքուինք միասին՝ յիշելու և թուելու Իր կեանքը: Առաւել՝ շարթուան մէջ մի քանիներս քով քովի կուգանք սերտելու Իր խօսքը և ուսուցումները: Ծնունդի և Զատիկի տօնական օրերուն՝ շատ այցելուներ կուգան մեր թանգարանը: Ուրեմն կարելոր է որ մենք թանգարանին պատկանինք: Արդիօք, իսկապէս էակա՞ն է այս:

Յիսուսի ծնունդն ու ուսուցումը այս աշխարհի վրայ արժէքաւոր հիմնաքար է: Հրեշտակներուն յայտարարութիւնը կը քաջալերէ մեզ սպասել, առաւել ապրիլ այնպիսի կեանքեր որ կը սպասեն Տէր Յիսուսի վերադառնալին: Քրիստոնէաներս թանգարանին պատասխանատուները (հսկիչները) չենք: Մեր կեանքը յոյսով և ակնկալութիւնով լի է: Յիսուս որ ծնաւ և յարեաւ, կրկի՛ն պիտի գայ:

Մենք որ կը վստահինք Յիսուսի իբրեւ մեր փրկիչը, կուգենք իմաստութեամբ գործածել մեր ժամանակը, մինչ կը սպասենք Իր վերադառնալին: Կուգենք հաւատարիմ գտնուիլ երբ կը ծառայենք Յիսուսի: Կուգենք փրկութեան Աւետարանը տարածել աշխարհի: Մեզի համար լուրջ գործ է սերտել Աստուծոյ խօսքը, պաշտել զԱյն, հաղորդակցիլ իրարու հետ և վերջապէս Իր փրկութիւնը քարոզել:

Այս առաւօտ, ետ նայելէ աւելի՝ յառաջ նայինք, անձկանօք սպասենք մեր Տէր Յիսուսի վերադառնալին: